Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն
ԶԼՄ-ների ազատության հարցերով ներկայացուցիչ
Արլեմ Դեզիր

ՀԱՐԱՎԿՈՎԿԱՍՅԱՆ 15-ՐԴ ՄԵԴԻԱ ՀԱՄԱԺՈՂՈՎ

Որակյալ լրագրությունը հուսալի և վստահելի տեղեկատվության համար

Հուլիսի 18-19, 2018 թ., Թբիլիսի, Վրաստան

ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ

Սույն փաստաթուղթն ամփոփում է 2018 թ. հուլիսի 18-19-ը Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիում ԶԼՄ-ների ազատության հարցերով ԵԱՀԿ ներկայացուցչի գրասենյակի կողմից կազմակերպված՝ Հարավկովկասյան 15-րդ մեդիա համաժողովում Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի ներկայացուցիչների կողմից քննարկված նկատառումներն ու առաջարկությունները:

Համաժողովի կիզակետում էին տարածաշրջանում ազատ մամուլի և խոսքի ազատության ոլորտում ծառացած մարտահրավերները, ինչպես նաև լրագրության և տեղեկատվության որակի բարելավման լավագույն փորձը:

Համաժողովի մասնակիցների կողմից քննարկվեցին հետևյալ տասը նկատառումները.

1. Ազատ և անկախ լրատվամիջոցները կարող են էական դերակատարում ունենալ ժողովրդավարական հասարակության ամրապնդման և «ատելության խոսքի», թյուրըմբռնումների և նախապաշարմունքների դեմ պայքարի համար՝ հուսալի և վստահելի տեղեկատվության տարածման միջոցով:

2. «Ատելության խոսքի», ահաբեկչության, ծայրահեղականության, ռասիզմի և անհանդուրժողության դեմ պայքարելու համար անհրաժեշտ է բոլոր միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների միջև համագործակցությունը:

3. Տեղեկատվության ազատությունը, մասնավորապես՝ տեղեկատվության մատչելիությունը, խթանում է հանրային քաղաքականության թափանցիկությունն ու հաշվետվողականությունը և քաղաքացիական հասարակությանը, այդ թվում՝ ԶԼՄ-ներին հնարավորություն է տալիս նպաստելու լավ կառավարմանը՝ դրանով իսկ խթանելով տարածաշրջանում խաղաղությունն ու անվտանգությունը:

4. Սոցիալական ցանցերի հարթակները, հաղորդագրությունների հավելվածները և լրատվական ագրեգատները կարևոր դեր ունեն

լուրերի տարածման համար և թվային դարաշրջանում ավանդական լրատվամիջոցներին կարող են հնարավորություն տալ զարգացնելու հաջողակ նորարարական բիզնես մոդելներ:

5. Լրագրողների և այլ մեդիա ներկայացուցիչների կողմից մասնագիտական չափանիշների, ԶԼՄ-ների ինքնակարգավորման և այլ նման մեխանիզմների կամավոր ընդունումը էական նշանակություն ունեն Հարավային Կովկասում մեդիա ոլորտի արհեստավարժության, ճշգրտության և էթիկական չափանիշների խթանման համար:
6. Հարգելով և պաշտպանելով լրատվամիջոցների ազատությունը՝ կառավարությունները պետք է անդրադառնան մեդիա դաշտի սոցիալ-տնտեսական մարտահրավերներին:

7. Անկախ հանրային հեռարձակողներն իրենց շահույթ չհետապնդող կարգավիճակով, կանոնադրական մանդատով և հանրային շահերը ներկայացնելու հաշվետվողականությամբ ծառայում են որակյալ լրագրությանը և ԵԱՀԿ տարածաշրջանում մեդիա միջավայրի կարևորագույն հիմնասյուներից են:

8. Հարավային Կովկասում լրագրությունը ավելի ու ավելի շատ մարտահրավերների է առերեսվում՝ կապված թե ավանդական, և թե սոցիալական մեդիայում ապատեղեկատվության և պրոպագանդայի աճող տարածվածության հետ:

9. Մեդիագրագիտությունը՝ այդ թվում ԶԼՄ-ների կողմից այս ուղղությամբ նախաձեռնությունները, վճռական դեր ունեն՝ ապահովելու, որ մեր հասարակությունները ավելի պատրաստ լինեն ընդունելու իրազեկ որոշումներ և ձեռք բերեն վստահելի տեղեկատվությունը տարբերելու հմտություն:

10. Ապատեղեկատվությանը դիմակայելուն ուղղված լավագույն փորձի շրջանակներում պետք է ապահովել և խրախուսել ԶԼՄ-ների ազատությունը, ապահովել, որ ազատ խոսքի նկատմամբ որևէ միջամտություն սահմանված լինի մատչելի, ճշգրիտ, հասկանալի և կանխատեսելի օրենքով, հետապնդի օրինական նպատակ՝ ինչպես սահմանած է մարդու իրավունքների միջազգային պայմանագրերով և խուսափել տեղեկատվության ազատ տարածման վրա որևէ ոչ անհրաժեշտ կամ անհամաչափորեն բացասական ազդեցությունից:

Այս կապակցությամբ ԶԼՄ-ների ազատության հարցերով ԵԱՀԿ ներկայացուցիչը ներկայացնում է հետևյալ ութ հանձնարարականները, որոնք քննարկվել են համաժողովում.

1. Տեղեկատվության մատչելիությունը՝ ապահովված հանրային իշխանությունների կողմից, հիմնարար դեր ունի տեղեկատվության որակի համար: Կառավարությունները պետք է առավել թափանցիկ

լինեն՝ տրամադրելով ստույգ և ժամանակին տեղեկատվություն՝ այդ թվում վստահելի վիճակագրական տվյալներ, իրենց երկրներում և Հարավային Կովկասում իրազեկ և ընդգրկուն հանրային երկխոսություն խթանելու նպատակով:

2. Ազգային անվտանգության և հակածայրահեղական միջոցառումները չպետք է հանգեցնեն արտահայտվելու ազատության վրա անտեղի սահմանափակումների, և կառավարությունները պետք է վերահաստատեն իրենց հանձնառությունը ԶԼՄ-ների և արտահայտվելու ազատությանը անվտանգության նոր համատեքստում: ԶԼՄ-ների ազատությունը չպետք է հակադրել անվտանգությանը:

3. Բոլոր շահագրգիռ կողմերը պետք է ավելի շատ ջանքեր գործադրեն՝ ապահովելու, որ համացանցը մնա բաց հանրային հարթակ կարծիքների և արտահայտման ազատության համար՝ ինչպես նախատեսված է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում և խթանել համացանցի ազատ մատչելիությունը:

4. Մեդիա դաշտը կարգավորող մարմինների անկախությունը պետք է երաշխավորվի և հարգվի պետության և մեդիա դաշտի կողմից՝ քաղաքական կամ տնտեսական անհարկի միջամտություններից զերծ մնալու նպատակով:

5. Մեդիա մասնագետները պետք է բավարար ջանքեր գործադրեն տարածաշրջանում ինքնակարգավորման ոլորտում անդրազգային համագործակցությունը ամրապնդելու ուղղությամբ՝ խթանելու հանդուրժողության և անխտրականության համընդհանուր արժեքներն ու մասնագիտական չափանիշները:

6. Մեդիագրագիտությունը պետք է կրթական ծրագրերում առաջնահերթ լինի, և լրատվամիջոցները պետք է իրենց առաքելությունը համարեն տարածել մեդիագրագիտությունը, այդ թվում քննադատության ենթարկելով ապատեղեկատվական և պրոգանդիստական քարոզչությունը և բարձրացնելով ԶԼՄ-ների ազատության և որակյալ լրագրողության արժեքի և էության մասին իրազեկումը: Փաստերի ստուգմանն ուղղված նախաձեռնությունները պետք է զարգացնել և խրախուսել:

7. Հանրային լրատվամիջոցները պետք է օրինակ ծառայեն՝ ինչպես տրամադրել որակյալ տեղեկատվություն՝ լավագույն միջազգային մասնագիտական փորձին և էթիկական նորմերին համապատասխան: Օրենսդրական դաշտը պետք է ապահովի նրանց անկախությունը և ֆինանսական կայունությունը:

8. ԶԼՄ-ների ազատության հարցերով ԵԱՀԿ ներկայացուցչի գրասենյակը համապատասխան առաջարկություններ կտրամադրի ԶԼՄ-ների ազատության և որակյալ լրագրողության վրա

ապատեղեկատվության ազդեցության մասին իրազեկությունը բարձրացնելու նպատակով, ինչպես նաև անհրաժեշտ և պատշաճ արձագանք՝ Հարավային Կովկասում այս երևույթների առնչությամբ: